վճռում դատարանը արտացոլել է ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման կապակցությամբ իր դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը եզրակացնում է, որ վերաքննիչ բողոքը հիմնավորված չէ, հետևաբար այն պետք է մերժել և Դատարանի վճիռը շարադրված լրացուցիչ պատճառաբանությամբ անփոփոխ թողնել՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

**6. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ բողոքը մերժվում է, և բողոքաբերը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ հոդվածներով Վերաքննիչ դատարանը՝

**ՈՐՈՇԵՑ**

1. Հայցվորի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել:

2. Թիվ ԵԴ/58554/02/22 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 22.12.2023 թվականի վճիռը թողնել անփոփոխ:

3. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

| | | |
|---|---|---|
| **ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ** | **ԴԱՏԱՎՈՐ** | **ԴԱՏԱՎՈՐ** |
| **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ** | **Ն.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ** | **Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ** |